ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» 01.09.2022, N 144) **միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արա Ալյոշայի Մկրտչյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 144 համարում հայտարարվել է մրցույթ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի** թափուր պաշտոնի համար, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2022 թվականի սեպտեմբերի 27-ին ռեկտորին դիմում է ներկայացրել միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության

թեկնածու, դոցենտ **Արա Ալյոշայի Մկրտչյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Ա.Ա.Մկրտչյանը ծնվել է 1986 թվականի նոյեմբերի 24-ին Սյունիքի մարզի Կապան քաղաքում: 1993-1999 թթ. սովորել է Կապանի թիվ 13 միջնակարգ դպրոցում, 1999-2003 թթ. սովորել և ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 2003 թվականին անվճար հիմունքներով ընդունվել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ (ԵՊՏԻ, ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)), որն ավարտել է 2008 թվականին՝ ստանալով տնտեսագետի որակավորում «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2008 թվականին անվճար հիմունքներով (տարկետման իրավունքով) ընդունվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցման ասպիրանտուրա Ը.00.06՝ «Համաշխարհային տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

Ա.Ա.Մկրտչյանը 2010 թվականին (ժամկետից շուտ) պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և 2011 թվականի փետրվարի 15-ին ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2020 թվականին ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Ա.Ա.Մկրտչյանը մանկավարժական աշխատանքը հաջողությամբ զուգակցել է գիտահետազոտական աշխատանքի հետ. տվյալ բնագավառում նա ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 8 է (1 դասախոսությունների նյութեր, 7 գիտական հոդված):

Աշխատանքային գործունեությունը: Ա.Ա.Մկրտչյանը 2011 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. նախ՝ 01.09.2011 - 01.07.2020՝ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում՝ ասիստենտ, իսկ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից՝ դոցենտ: Ա.Ա.Մկրտչյանը 2022

թվականի հուլիսի 1-ին նշանակվել է միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար: Զեկուցողը նշեց նաև, որ գիտամանկավարժական աշխատանքին զուգահեռ Ա.Ա.Մկրտչյանը 03.09.2018 - 30.06.2022 զբաղեցրել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի տեղակալի պաշտոնը: 2017 թվականին նա եղել է համալսարանի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի տեղակալ, իսկ 2018 թվականին՝ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար: Նշվեց նաև, որ Ա.Ա.Մկրտչյանը 01.09.2008 - 10.02.2011 աշխատել է «Ռոքարմ» ՍՊԸ-ում որպես տնտեսագետ-հաշվետար, 10.02.2011 - 30.06.2011 ժամավճարային կարգով դասավանդել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում (ասիստենտ): Համալսարանում դասավանդելուն զուգահեռ 26.03.2012 - 05.09.2014 աշխատել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության բանկերի վերահսկողության առաջին բաժնում՝ մասնագետ, երրորդ բաժնում՝ վերահսկող:

Ա.Ա.Մկրտչյանը ակտիվ մասնակցություն է ունենում հասարակական և գիտական միջոցառումներին, դասախոսությունները կարդում է ժամանակակից տնտեսագիտության պահանջներին համապատասխան, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ատենախոսությունների քննարկումներին, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարմանը, վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը: Ա.Ա.Մկրտչյանը մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների, սեմինարների և համաժողովների:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի նիստում (արձանագրություն N 2) քննարկվել է միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ա.Ա.Մկրտչյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին

հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Զ.Ա.Թադևոսյանը, Ա.Դ.Գոմցյանը: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1: Ձեռնպահ է եղել Ա.Ա.Մկրտչյանը՝ հնարավոր շահերի բախումից խուսափելու համար) միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը երաշխավորել է Ա.Ա.Մկրտչյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ի նիստում (արձանագրություն N 12), որտեղ բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արա Այոշայի Մկրտչյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողներից հետո Արա Այոշայի Մկրտչյանը ներկայացրեց միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արա Այոշայի Մկրտչյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ համալսարանի միջազգային տնտեսական

հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 58-ը (կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0): Քվեարկության պահին դահլիճում չէր Մ.Ս.Մելքումյանը):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի 35-րդ կետը, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 2 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 56, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 1**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արա Այոշայի Մկրտչյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան